ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քենիայի Հանրապետություն (Նայրոբի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Զարուհի Բաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Քենիայի Հանրապետություն (Նայրոբի), 2019 թվականի նոյեմբերի 11-15-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Քենիայի և Դանիայի կառավարություններն ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Քենիայի և Դանիայի կառավարությունների ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից (ՄԱԲՀ) Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում կազմակերպված բարձր մակարդակի քաղաքական գագաթնաժողովին մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**
   Գագաթնաժողովում քննարկվել են հինգ հիմնական հարցեր. սեռական և վերարտադրողական առողջությունը՝ որպես համընդհանուր առողջապահական ծածկույթի մաս, 1994 թվականին Կահիրեում Բնակչության և զարգացման միջազգային համաժողովում (ԲԶՄՀ) 179 կառավարությունների կողմից համաձայնեցված և 2019 թվականին քաղաքական հռչակագրով միաձայն հաստատված Գործողությունների ծրագրի բոլոր նպատակները կյանքի կոչելու համար անհրաժեշտ ֆինանսավորումը, ժողովրդագրական բազմազանությունը և տնտեսական աճն ու կայուն զարգացումն առաջ մղելու նրա ուժը, գենդերային բռնությանը և վնասակար գործելակերպերին վերջ դնելու քայլերը, ինչպես նաև

սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքը՝ նույնիսկ մարդասիրական և վտանգավոր համատեքստերում:
Նայրոբիի գագաթնաժողովը նպատակ ուներ մոբիլիզացնելու աշխարհի երկրների քաղաքական կամքը և ֆինանսական հանձնառությունները, որոնք անհրաժեշտ են 1994 թվականին Կահիրեում Բնակչության և զարգացման միջազգային համաժողովում (ԲԶՄՀ) 179 կառավարությունների կողմից համաձայնեցված և 2019 թվականին քաղաքական հռչակագրով միաձայն հաստատված Գործողությունների ծրագիրը հրատապորեն վերջնականապես և ամբողջությամբ իրականացնելու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նայրոբիի գագաթնաժողովին երկու ելույթ եմ ունեցել:

1) Ներկայացրել եմ Հայաստանի հանձնառությունները, որոնք իրավական առումով պարտադիր չեն:

1. Սեռական և գենդերային հիմքով պայմանավորված բռնության դեպքերի նվազում, այդ թվում երեխաների նկատմամբ՝ ապահովելու անձանց որպես փոփոխության սուբյեկտներ իրացնելու իրենց ներուժը հասարակության և տնտեսության մեջ.

- *Ընտանեկան բռնության մասին օրենքում փոփոխություն, ընտանեկան բռնության օրենքի հիման վրա մշակված գործողությունների պլան մինչև 2022 թ.,*
- *Մինչև 2030 թ. ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված չորս կացարաններ,*
- *Գործող ընտանեկան բռնության զոհերի աջակցման մարզային 10 կենտրոններ մինչև 2020 թ.,*
- *«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացում Ազգային Ժողովի կողմից մինչև 2022 թ.:*

2. Տեղական բյուջեներից ավելացնել ֆինանսավորումը, ինչպես նաև խթանել նոր և նորարարական գործիքների ու կառույցների ստեղծումը՝ Բնակչության և զարգացման միջազգային համաժողովում (ԲԶՄՀ) 179 կառավարությունների

կողմից համաձայնեցված գործողությունների ծրագիրն առավել ամբողջական, արդյունավետ և արագացված տեմպով իրականացնելու նպատակով.

- *Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ազգային ռազմավարությունն ընդունված մինչև 2020 թ.,*
- *Ակտիվ և առողջ ծերացման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրն ուժի մեջ է մտնում 2022 թ.,*
- *Բոլոր ծրագրերի գենդերազգայուն բյուջետավորում 2021 թ.-ից (իսկ 2020 թ.-ից փորձարկված 10 ծրագրեր),*
- *Համընդհանուր կրթության չափորոշիչների վերանայման ընթացքում ավելացնել գենդերային հատվածը, ներդնել առարկայացանկում, վերանայել դասագրքերի բովանդակությունը գենդերազգայունության տեսանկյունից:*

3. *Բարելավել ժողովրդագրական դիվիդենդը՝ ավելացնելով չափահասների և երիտասարդների համար աշխատանքի ընդունվելու հնարավորությունները.*
   - *2020-23 թթ. Զբաղվածության ռազմավարությունը ընդունված մինչև 2020 թ.,*
   - *Առաջին անգամ աշխատանք փնտրողների համար՝ 2021 թ. պետական բյուջեից ֆինանսավորված ծրագրեր՝ նրանց մուտքն աշխատաշուկա խթանելու նպատակով.,*
   - *Աշխատանքի էլեկտրոնային հարթակ մինչև 2023 թ.,*
   - *Անմրցունակ և/կամ սահմանափակ հմտություններ ունեցող երիտասարդ մայրերի համար կրթական ծրագրեր՝ աշխատաշուկայում ներգրավելու համար մինչև 2023 թ.:*

4. *Կառուցելով խաղաղարար, արդար և ներառական հասարակություններ, որտեղ բոլորը՝ երիտասարդ և տարեց, հաշմանդամություն ունեցող մարդիկ, ազգային փոքրամասնություններ մասնակցում են հասարակության կառուցմանը, զգում են գնահատված, հնարավորություն ունեն անկախ տնօրինելու իրենց կյանքը և մասնակցելու հասարակության համընդհանուր բարգավաճմանը:*
   - *Ապահովելով սոցիալական ամբողջական ներառում, կարիքների գնահատում և անհատական սոցիալական ծրագրերի ներդրում և իրականացում՝ անդրադառնալու տարեց կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, ազգային փոքրամասնության կանանց հարցերին մինչև 2025 թ.:*
   - *ՄԱԿ 1325 միջոցառումների ծրագրի իրականացում մինչև 2021 թ.՝ սահմանամերձ շրջաններում ապրող աջիկների և կանանց կարիքների*

գնահատում և կարիքի վրա հիմնված ծառայությունների ներդրում, նրանց դերի ուժեղացում:

2) Ելույթ եմ ունեցել թեմատիկ խմբի քննարկմանը՝ անդարդառնալով Հայաստանում սեռով պայմանավորված հղիության ընդհատումների և նորածինների սեռային հարաբերակցության խնդրին:

Ելույթի տեքստը ստորև՝

«Հայաստանի Հանրապետության կառավարության անունից կցանկանայի շնորհակալություն հայտնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամին, Քենիայի Հանրապետության և Դանիայի Թագավորության կառավարություններին՝ գագաթնաժողովին մասնակցելու հրավերի և միջոցառման գերազանց կազմակերպման համար:
Ինձ համար մեծ պատիվ է Ձեզ հետ կիսել վերջին մի քանի տարիների մեր ձեռքբերումները և այն մարտահրավերները, որոնք պատրաստվում ենք հաղթահարել:
Հայաստանում մի ասացվածք կա՝ գյուղ կանգնի, գերան կկոտրի: Այլ կերպ ասած, եթե մենք միասին ենք, որևէ բան անհնարին չէ: Այսօր կուզենայի պատմել միասնական աշխատանքի մի հաջողված պատմության մասին՝ կանանց և աղջիկների իրավահավասարության մասին:
9 տարի առաջ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի մեր գործընկերները ահազանգեցին: Նրանք ուսումնասիրել էին պաշտոնական վիճակագրությանը և պարզել, որ 90-ականների սկզբից ՝ նորածին տղաների և աղջիկների թվի հարաբերակցության շեղում կա: Եթե այդ տարիներին 102-105 տղայի դիմաց ծնվում էր 100 աղջիկ, ապա 2000-ականների սկզբին այդ տարբերությունը կազմում էր 120 տղայի դիմաց 100 աղջիկ: Այս ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում էր երրորդ տեղն աշխարհում:
Ինչպես ցույց էին տալիս ուսումնասիրությունները, պատճառն այն էր, որ նախածննդյան շրջանում սեռի ընտրությունը հանգեցրել էր որդիների նախապատվության և աղջիկների թերագնահատման:
Հայաստանում 2019 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում նորածինների սեռերի հարաբերակցությունն այսպիսին է՝ 110 տղայի դիմաց 100 աղջիկ: 2015 թ.-ից հետո գրեթե յուրաքանչյուր տարի այս ցուցանիշը նվազելէ մեկ տոկոսային կետով: Հայաստանն այժմ աշխարհում այս դասակարգմամբ հինգերորդ տեղում է:

Սա ինը տարիների շարունակական աշխատանքի արդյունք է, որն ամբողջացրել է խնդիրների վերհանումից մինչև մանրակրկիտ ուսումնասիրության, լայնածավալ քարոզչության և հանրային իրազեկման, տեխնիկական աջակցությանն ուղղված համատեղ ջանքերը:

ՀՀ կառավարությունը սեռով պայմանավորված հղիության ընդհատումները ճանաչել է ազգային գերակայություն, մշակել և 2015 թ.-ին ընդունել նախածննդյան շրջանում պտղի սեռի ընտրությանն ուղղված առաջին ազգային ծրագիրը:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամն աջակցեց մեզ ստեղծել դաշինք, որը բաղկացած է Կառավարությունից, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, հավատահենք կազմակերպություններից, միջազգային դոնորներից և լրատվամիջոցներից:

Մեր հավաքական աշխատանքի արդյունքում լրատվամիջոցները, հասարակության մի զգալի մասը, միջազգային կազմակերպությունները, Կառավարությունը, խորհրդարանը և եկեղեցին դարձել են մեկ թիմ, որը կանգնած է այս արատավոր սովորության դեմ:

ՄԱԿ Բնակչության հիմնադրամի աջակցությամբ Հայաստանը հաջողությամբ կատարում է իր միջազգային պարտավորությունները՝ ԵԽԽՎ 1829 բանաձևի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մարդու իրավունքների վերաբերյալ գրեթե բոլոր հիմնական միջազգային իրավական ակտերը, մասնավորապես՝ գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ: Որպես ՄԱԿ-ի ընտանիքի և ԵՄ անդամ, և որպես անկախ պետություն, որը ձգտում է եվրոպական ինտեգրմանը, Հայաստանը ստանձնել է նաև որոշակի պարտավորություններ՝ ազգային օրենսդրությունը ներդաշնակեցնելու այդ իրավական ակտերի հետ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելվում է «գենդերային հիմքով խտրականությունը», իսկ ազգային ընթացիկ քաղաքականությունն ու բարեփոխումները համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030 նպատակների օրակարգին և նպաստում են դրանց, մասնավորապես՝ նպատակ 5-ի իրականացմանը, որը սահմանում է «գենդերային հավասարության հասնելու և բոլոր կանանց և աղջիկներին հզորացնելու» անհրաժեշտությունը:

Տիկնայք և պարոնայք,

Անցյալ տարի գարնանը աշխարհը ականատես եղավ Հայաստանում պատմական փոփոխությունների, որոնք գտնվում էին միջազգային հանրության և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Աշխարհի հայերը ներգրավված էին խաղաղության և սիրո հեղափոխության մեջ, ինչը հանգեցրեց իշխանության խաղաղ

փոխանցման: Կանայք, որոնց մեծ մասը երիտասարդ էին, հեղափոխության շարժիչ ուժն էին և ողջ գործընթացի խաղաղ բնույթի պահապանները:
Հայաստանի նոր Կառավարությունը տարբեր առիթներով հայտնել է իր պատրաստակամությունը՝ խրախուսելու երկրում կանանց քաղաքական մասնակցությունը և որոշումների կայացման գործընթացներում նրանց ներգրավվածությունը՝ ոչ միայն ժողովրդավարություն ապահովելու, այլև երկրում կայուն զարգացում ապահովելու և կանանց համար իրենց ներուժի օգտագործման առավելագույն հնարավորությունների ստեղծման համար:
Մենք գիտակցում ենք, որ դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու՝ աղջիկների և տղաների հավասար արժևորման և սեռի հարաբերակցության պահպանման համար, սակայն մենք լավատես ենք, քանի որ գիտենք՝ գյուղ կանգնի, գերան կկոտրի:
Շնորհակալություն»:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նորվեգիայի կառավարության անդամների և դեսպանի հետ քննարկվել է Հայաստանում սեռով պայմանավորված հղիության ընդհատման կանխարգելման ծրագրին հնարավոր աջակցության հարցը՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի միջոցով, ինչպես նաև սոցիալական ոլորտում փորձի փոխանակման հնարավորությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

Զարուհի Բաթոյան, 20.11.2019